Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, աշխատությամբ՝ Սարգիս Հարությունյանի, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2006, 501 էջ:

«Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հայկական բաժանմունքի տնօրեն դոկտոր Զավեն Եկավյանի և Երևանի համալսարանի հրատարակչության տնօրեն Պերճ Ստեփանյանի հովանավորության ու սիրահոժար պատրաստակամության շնորհիվ վերջապես իրեղեն տեսք ստացավ հայ ժողովրդի բազմադարյան մտավոր գործունեության և հոգևոր գանձարանի ևս մեկ բյուրեղացած ոլորտ՝ հմայական աղոթքների բազմաշերտ աշխարհը: Հազարամյակների միջով հասնելով մեր օրերը՝ բանավոր ավանդման կամ ցաքուցրիվ գրառումների միջոցով, հայ հին դիցաշխարհի այս ուրույն բնագավառն ունեցավ իր առաջին գիտական մշակումն ու մեկնաբանությունը:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանի կազմած սույն ժողովածուն մեծարժեք արգասիքն է նրա բազմամյա տքնաջան աշխատանքի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտում արխիվների մանրազնին ուսումնասիրության, ինչպես նաև սեփական գիտարշավների ընթացքում հավաքած նյութի մանրակրկիտ դասակարգման: Երկար տարիներ լինելով նշված ինստիտուտի բանահյուսության բաժնի վարիչ, իսկ այնուհետև ինստիտուտի փոխտնօրեն՝ Հարությունյանը ոչ միայն հմտորեն ղեկավարել և կազմակերպել է իր ոլորտի աշխատանքները, այլև ինքն էլ շարքային մասնակցությամբ նշանակալից ավանդ է ներդրել բանահավաքչական ոլորտում:

Սակայն եթե ուսումնասիրությունը սահմանափակվեր միայն այդքանով, այն կլիներ զուտ բանագիտական բնույթի մի ժողովածու՝ առանց հավակնելու խորը վերլուծական հետազոտություն պարունակող մենագրություն լինելուն: Մինչդեռ Սարգիս Հարությունյանը վերոնշյալ ողջ նյութն անցկացնելով իր էության միջով՝ հանրության դատին է ներկայացրել իսկապես նոր մի երևույթ հայագիտության և հայ բանագիտության պատմության մեջ: Այս առումով՝ Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ աշխատությունը ոչ միայն համահավաք է, որով նմանվում է Ա. Ղանալանյանի Ավանդապատում և իր իսկ հեղինակած Հայ ժողովրդական հանելուկներ հետազոտություններին, այլև աղբյուրագիտական և առասպելաբանական լուրջ վերլուծություններ պարունակող մենագրություն է: Նրա գիտական մասը, որոշ առումներով նոր խոսք լինելով նաև համաշխարհային բանագիտության մեջ, զետեղված է գրքի առաջին մասում՝ որպես ներածական ուսումնասիրություն, մնացյալ չափով՝ նաև ծանոթագրությունների մեջ:

Շարունակելով իր աշխատասիրած վերոհիշյալ Հայ ժողովրդական հանելուկներ (1960, 1965), ինչպես նաև անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության Մեջ (1975) հետազոտություններում կիրառված օգտավետ ավանդույթները՝ Հարությունյանն իր նոր մենագրության հենքը կազմող համահավաքի նյութը համեմել և օժտել է բազմաբնույթ մեկնություններով ու ծանոթագրություններով: Սրանցում հեղինակի կողմից պարզաբանվում է աղոթքների առանձին տեսակների ձևավորման կրոնահավատալիքային միջավայրը (օրինակ՝ չար աչքի հետ կապված հավատալիքները, հմայական կապքի և պահպանության մասին պատկերացումները և այլն.): Աղոթքների այս քննությունը զարմանալիորեն ի հայտ է բերում հայոց վաղնջական առասպելաբանական պատկերացումների մնացուկները (մասնավորապես, օրինակ, ամպրոպային առասպելների հետ կապված):

Հանելուկների, անեծքների, օրհնանքների և աղոթքների հանդեպ նշված մոտե-

ցումների ընդհանրությունը՝ առաջին հայացքից տարբեր ուսումնասիրություններում, միանգամայն հասկանալի է դառնում հենց Ս. Հարությունյանի բացատրությունից հետո. «Հիմնական տարբերությունն այն է, որ հմայքներում սիմվոլային պատկերները հանդես են գալիս արարողությունների տեսքով, նախանշանային գուշակություններում՝ իրական եղելությունների, իսկ հանելուկային բանաձևերում պատկեր-խոսքի միջոցով: Այդ տարբերությունները, հարկավ, էական նշանակություն չունեն երեքի էլ հոգեբանական մեխանիզմի նմանությունները հավաստելու և բացատրելու տեսակետից: Այսպիսի նմանությունները վկայում են մի կողմից՝ հանելուկների, հմայքների ու գուշակելի նախանշանների մտածողության միևնույն սիմվոլային-փոխաբերական բնագավառին պատկանելու մասին, մյուս կողմից նաև՝ կիրառական միևնույն նպատակներ ունենալը, այն է՝ հանելուկների երբևէ դյութահմայական նկատառումներով կիրառվելը, որ հավաստված է նաև պատմազգագրական որոշակի փաստերով» (էջ 20):

Այս առումով՝ կիրառական բանահյուսության հիմնական տեսակներ են համարվում հենց աղոթքները, երդումները, անեծքներն ու օրհնանք-բարեմաղթությունները: Սրանք անմիջականորեն կապված են հմայքի և նրանից բխող ծեսի ու արարողության հետ՝ ի տարբերություն, ասենք, ավանդազրույցների, որոնք բանարվեստի շատ հին և տարածված տեսակ լինելով հանդերձ՝ չեն կարող կոչվել կիրառական բանահյուսության նմուշներ:

Հարությունյանի կազմած համահավաքը, ինչպես նշվեց, ընդգրկում է ոչ միայն հմայական աղոթքների գրառված տարբերակների տպագիր և արխիվային ողջ ժառանգությունը, այլև իր և իր գործընկերների գրառած՝ երբևէ չհրատարակված տարբերակները, ինչպես նաև միջնադարյան ախթարային ժողովածուներից քաղված նմուշները: Ներկայացվող աշխատության մեջ ժողովրդական աղոթքների ամբողջ նյութը դասակարգվել ու համախմբվել է ըստ կիրառության բնագավառների ու նպատակների՝ հետևյալ ութ խմբերում.

ա) բուժաղոթքներ (այդ թվում՝ չար աչքի և ծննդկանի աղոթքներ), բ) առողջապահության և մարմնի մասերի մաքրագործման աղոթքներ, գ) փորձանք-պատահարների և բնական աղետների կանխման աղոթքներ, դ) հմայական կապքի և պահպանության աղոթքներ, ե) գործնական նպատակների իրագործման աղոթքներ, զ) երեկոյան և առավոտյան աղոթքներ, է) օրվա տարբեր ժամերի, երազի բարի կատարման, պանդուխտի, տարբեր սրբերի, ծիսական, նորալուսնի աղոթքներ, ը) զավեշտական աղոթքներ և պարոդիաներ:

Այս խմբերից մի քանիսն օժտված են հավելվածներով, որոնք համալրված են միջնադարում գրավոր ավանդված աղոթքներով:

Ինչպես հայտնի է, նախնադարյան առասպելաբանական մտածողությամբ մարդն իրեն տակավին չէր տարանջատում բնությունից՝ ընկալելով այն որպես իր հետ փոխկապակցված և սերտաճած մի օրգանիզմ: Այստեղից էլ սկզբնավորվում է վաղնջական աշխարհընկալման կարևորագույն բաղադրիչներից մեկը՝ հմայությունը կամ մոգությունը, որը կոչված էր ապահովելու այդ ընդհանուր օրգանիզմի մեկ բաղադրիչի (տվյալ դեպքում՝ մարդու) ազդեցությունն ու ներգործությունը մյուս բաղադրիչների վարքի վրա:

Հմայական պատկերացումներն ու հավատալիքները առկա են եղել դեռ քարանձավաբնակ մարդու ժամանակներում, երբ ձևավորված չէր մարդկային հոդաբաշխ խոսքը: Սակայն հմայությունն իր «վերելքը» ապրեց հատկապես լեզուների առաջացմանը զուգընթաց, քանի որ վաղնջական մարդու համար յուրաքանչյուր բառ, հնչյուն թե ձայնարկություն ուներ արարչագործական, հետևաբար նաև հմայական արժեք ու նշանակություն: Հենց այդ ժամանակաշրջանում էլ, ամենայն հավանականությամբ, գտնվում են ժողովրդական հմայական աղոթքների արմատները: Հետագայում «հմայության դարաշրջանին» փոխարինելու եկած կրոնները անխուսափելի կերպով իրենց մեջ ներառեցին ենթաշերտային հմայական տարբեր ու բաղադրիչներ, որոնք շարունակեցին գոյատևել նոր ժողովրդական հավատալիքներում, մարդկանց կենցաղում ու կրոնական ծեսե-

րում՝ որպես հմայության վերապրուկներ ու մնացուկներ:

Մարդկային մտածողության և հոգեբանության վրա լեզվի զարգացման ունեցած հեղափոխիչ դերի արդյունքում՝ հմայք կամ մոգություն հասկացությունն ինքնին տիպաբանորեն կարելի է բաժանել հետևյալ հիմնական բաղադրիչների՝ ա) հմայական պատկերացումներ ու հավատալիքներ, որոնցից ծագում են հմայական արարողությունները, բ) հմայական արարողություններ, որոնք այդ «տեսական» հավատալիքների գործնական կիրառումն են ներկայացնում, գ) հմայական արարողություններին ուղեկցող անկախ խոսքեր՝ կայուն բանաձևերի տեսքով, որոնք կարող են հանդես գալ թե՛ գրավոր, թե՛ բանավոր (սկզբնապես, անշուշտ, միայն բանավոր): Այս երեք հիմնական բաղադրիչներին կարելի է հավելել նաև չորրորդը՝ դ) հմայական արարողություններին ուղեկցող զանազան առարկաներ և իրեր (հուռութքներ, հմայիլներ, թալիսմաններ և այլն), որոնք օժտված են զուտ կիրառական-պահպանական գործառույթներով:

Նախամարդու պատկերացմամբ՝ առարկաների, երևույթների, մարդկանց, բույսերի ու կենդանիների միջև գոյություն ունեն խորհրդավոր, անտեսանելի կապեր ու առնչություններ: Այս հիմքի վրա են հենց ձևավորվել զանազան սնոտիապաշտություններն ու հմայական հավատալիքները: Նման մտածելակերպի պատճառն այն էր, որ նախամարդն ի զորու չէր ընկալելու առարկաների ու երևույթների բուն պատճառահետևանքային կապը, այլ նրա համար գոյություն ունեին լոկ արտաքին մեխանիկական հաջորդականությունը և «հմայական տրամաբանության» վրա հիմնված երևակայական կապը: Նման ըմբռնումից է բխում այն պատկերացումը, թե որևէ ցանկալի իրադրություն կամ երևույթ կարելի է առաջ բերել՝ դրան նախադրելով մեկ այլ գործողություն կամ իրադրություն:

Ըստ այդմ, հմայության հոգեբանական մեխանիզմը բաղկացած է տրամաբանական երեք աստիճանից՝ ա) ցանկություն կամ նպատակ, բ) դա իրագործելուն միտված հմայական արարողություն, գ) ակնկալվող հետևանք: Տարբերությունն այստեղ իրական արտադրական-օգտակար գործունեությունից (երկրագործություն, արհեստագործություն և այլն) այն է, որ ակնկալվող արդյունքը դիտվում է որպես մարդու և գերբնական ուժերի համագործակցության հետևանք: Ընդ որում, սկզբնապես իրական-արտադրական և հմայական գործոնները եղել են շաղկապված ու միահյուսված մեկ գործողության մեջ՝ հետագայում միայն աստիճանաբար տարանջատվելով:

Այդ տարանջատման ընթացքում էլ հմայությունը վերածվել է մի ուրույն արհեստի կամ արվեստի՝ ի տարբերություն առավել հնագույն ժամանակների, երբ յուրաքանչյուր մարդ, ըստ էության, միաժամանակ նաև հմայող էր կամ կախարդ: Այդ հեռավոր դարաշրջանում գործածվող հմայական աղոթքները ի հայտ էին բերում հմայողի անսահմանափակ հնարավորությունները բնության ուժերի վրա՝ ընդհուպ մինչև այն, որ յուրաքանչյուր հմայող ընկալվում էր որպես դեմիուրգ (արարիչ): Ժամանակի ընթացքում մարդիկ հասկացան, որ իրենցից ոմանք առավել «արհեստավարժ» են մոգության ասպարեզում և նրանց հմայական գործողություններն առավել դրական արդյունք են տալիս: Բնական ընտրության արդյունքում «գտված» այդ անհատներն էլ դարձան հասարակության մեջ առանձին մի խավ՝ հմայության ավանդույթների կրողներ ու կիրառողներ:

Ինչպես հայտնի է հոգեբանության մեջ, որոշակի պայմանների առկայության դեպքում մարդու պատկերացումներն առաջ են բերում նաև որոշակի շարժումներ, որոնք կարող են կապվել շրթունքների, լեզվի, ձայնալարերի հետ՝ սկիզբ դնելով խոսքին: Կամ էլ այդ շարժումները կարող են արտահայտվել ձեռքերի, ոտքերի կամ այլ մարմնամասերի միջոցով՝ սկիզբ դնելով գործողությանը: Առաջին դեպքում հմայական պատկերացումների զուգորդումները վերարտադրվում են սոսկ խոսքով, որից ձևավորվում է հմայական բանաձևը, իսկ երկրորդ դեպքում՝ վերարտադրվում են գործողությամբ, որից էլ բխում է հմայական արարողությունը կամ ծեսը: Այդպիսով՝ «հմայական պատկերացումներն ու հավատալիքները, հոգեբանական զուգոր-

դումների շնորհիվ վերարտադրվելիս, կամազգայական ուժեղ մղումներից դրդված՝ առաջ են բերում խոսք և արարողություն» (էջ 24), որոնք հաճախ հանդես են գալիս միահյուսված:

Շրթունքների շարժումներր, ձայնարկություններն ու բացականչությունները, հնչագաղափարային բառերր երբեք էլ անկախ ձևով հանդես չեն եկել, դրանք միշտ էլ օժանդակ դեր են կատարել՝ ուղեկցելով բուն արարողությանը: Այս առնչությամբ Ս. Հարությունյանը բերում է խիստ բնորոշ մի օրինակ, որը հանդիպում է աշխարհի բազմաթիվ ժողովուրդների մեջ. այսպես՝ «թու՛, թու՛, թու՛, տաշտի ոռքր մաշի, / Սապոնինր չմաշի», *կամ՝* «թի՛վ, թի՛վ, թի՛վ, թի՛վ, / Մեռել՝ մեռելոցին, / Ետ երթաս՝ առաջ չիգաս, / Տուշմընիս դուռ չի գաս» *հմայական բանաձևերում՝ թքելու գործողությունը՝ իբրև չար ուժի սաստման կամ կանխման արարք, համադրվել է հմայական խոսքին որպես բառահնչյունային միավոր և դարձել խոսքի բաղադրիչ (էջ 24): Անիմաստ շշունջներն ու բացականչությունները հետագայում աստիճանաբար վերաիմաստավորվել են՝ վերածվելով իմաստալից խոսքերի:*

Ինչպես նշում է Հարությունյանը, հմայական խոսքի սկզբնական տեսակները պետք է լինեին հմայողի ցանկությունն ու կամքը արտահայտող պարզունակ բանաձևերը, առաջին հերթին՝ անեծքներն ու օրհնանքները, ապա երկրորդաբար դրանցից բաղկացած երդումները, որոնցից աստիճանաբար գերաճել են հմայական ծավալուն բանաձևերր կամ աղոթքներր: Այս և մի շարք այլ նկատառումներից ելնելով՝ Հարությունյանր եզրակացնում է, որ «բանավոր հմայության որոշ տեսակներ ի սկզբանե գոյացել ու կենցաղավարել են արարողություններից անկախ»: Առանձնակի հետաքրքրություն և արժեք են պարունակում հեղինակի բառաքննական մտորումները տարբեր ժողովուրդների մեջ «խոսք» նշանակող բառարմատների և դրանց հոմանիշների վերաբերյալ (էջ 27-29): Դրանցից պարզորոշ երևում է, որ վաղնջական ավանդական մտածողությամբ՝ տարբերություն չէր դրվում մտքի (համոզմունք), խոսքի և գործի միջև, ինչը ցայտունորեն արտացոլված է հայերեն բան *հասկացության եռիմաստ (միտք, խոսք, գործ) ըմբռնման մեջ:*

Այսպիսով, կառուցվածքային յուրահատկություններր հաշվի առնելով, Հարությունյանը հմայական-կիրառական բանահյուսության տեսակները բաժանում է երկու խմբի. ա) հմայական պարզ բանաձևեր (անեծքներ և օրհնանք-բարեմաղթություններ), բ) հմայական բարդ բանաձևեր (երդումներ և հմայական զանազան աղոթքներ):

Աղոթք (աղաւթ-ք) բառն ինքը ծագում է աղաչել *«աղերսել, խնդրել» բառից և բառացիորեն նշանակում է «աղերս, աղաչանք»: Թեև ներկայիս աղոթք ասելով հասկանում ենք հիմնականում եկեղեցական ու ժողովրդական պաշտամունքային պաղատանքի աղոթքները, սակայն հնում այդ բառեզրով են կոչվել նաև հմայական բանաձևերր (գիր կամ թուղթ ու գիր, հմայիլ): Ի սկզբանե աղոթել հասկացությունն ինքնին ընկալվել է որպես հմայելու, կախարդելու գործողություն, ինչի վկայությունն է հայերենի ժողովրդախոսակցական լեզվում պահպանված* աղոթած *մարդ,* աղոթած *էշ դարձվածների «թմրած, ապշած, հլու» նշանակությունր, ինչպես նաև աղոթել բառի՝ ընդհանուր «աղոթելով և կախարդությամբ բժշկություն անել» իմաստը: Մեկ այլ տեսանկյունից՝ աղոթքն ընկալվել է իբրև անարյուն զոհաբերություն, որը փաստորեն փոխարինել է իրական գործողությանը՝ ուղղված գերբնական ուժերին սիրաշահելուն:*

Աղոթքներր ստորաբաժանվում են կրոնապաշտամունքային (հեթանոսական թե քրիստոնեական) և հմայական աղոթքների: Կրոնապաշտամունքային աղոթքներն առաջին հերթին կապված են որևէ որոշակի ծիսակատարության, պաշտամունքային արարողությունների հետ, որոնք ունեն հանրային բնույթ, միտված են հասարակության նյութական կամ հոգևոր պահանջմունքները բավարարելուն և կատարվում են քրմական կամ եկեղեցական դասի ներկայացուցիչների կողմից: Մինչդեռ հմայական աղոթքները կապ չունեն պաշտոնական արարողությունների հետ և ունեն անհատական դիպվածային բնույթ: Ըստ այդմ՝ հմայական աղոթքը կատարվում է ոչ բացահայտ, այլ գաղտնի՝ աղո-

թողի և աղոթքը պատվիրող անձի մտերմիկ, անհատական հարաբերակցությամբ, ընդ որում՝ առանձին դեպքերում աղոթողն ու աղոթվողը միևնույն անձն են լինում:

Տիպաբանորեն հմայական աղոթքները կարող են լինել. ա) հմայագործի բացարձակ ակտիվության աղոթքներ, որոնցում աղոթող անձը հանդես է գալիս հմայագործի ակտիվ դերով և բացառվում է գերբնական՝ աստվածային կամ դիվական ոգիների միջամտությունը, բ) հմայագործի հարաբերական ակտիվության աղոթքներ, որոնցում աղոթող հմայագործը ստիպում է որևէ դիվային կամ աստվածային ուժի՝ իրագործել իր ցանկացածը, գ) պաղատանքի աղոթքներ, որոնք կարելի է անվանել պասսիվ «հմայագործի» աղոթքներ, թեպետև դրանցում աղոթողն այլևս արհեստավարժ հմայող անձ չէ, որին դիմում է պատվիրատուն, այլ յուրաքանչյուր սովորական անհատ, որը պարզապես ապավինում է Աստծո, սրբերի, հրեշտակների զորությանը:

Առաջին տիպի աղոթքներն ամենահինն են և սերում են նախնական հմայություններից, երբ սովորական անհատն ինքն էլ որպես արարիչ էր հանդես գալիս, երկրորդ տիպի աղոթքները պատմականորեն համեմատաբար առավել ուշ ժամանակների արդյունք են և կազմում են հմայական աղոթքների գերակշիռ մասը (այս տիպին են հարում նաև հեթանոսական պաշտամունքային աղոթքները), իսկ երրորդ տիպի աղոթքների թվին են դասվում քրիստոնեական տերունական աղոթքների ճնշող մեծամասնությունը և ժողովրդական համաբնույթ պաղատանքի աղոթքները: Կարելի է ժողովրդական բոլոր աղոթքները բաժանել նաև երկու հիմնախմբի՝ հմայական և պաղատանքի:

Ժանրային-տիպաբանական կամ կառուցվածքային առումով հմայական աղոթքները լինում են պարզ և բաղադրյալ, որոնք իրենց հերթին ունեն բազմաթիվ ենթատիպեր, այն է՝ երկանդամ, եռանդամ, քառանդամ և նույնիսկ ավելի կազմություն ունեցող (պարզ տիպերը): Բաղադրյալ տիպերը ձևավորվում են երկու հիմնական եղանակով՝ պարզ տիպերի վրա նորանոր մոտիվներ հավելելու և կրոնաառասպելական զանազան մոտիվների, հավատալիքների ու պատկերացումների հիման վրա հյուսված վիպական իրադրության և ցանկության խոսքի տարբեր ասույթ-բանաձևերի բաղարկումով: Վիպական այդ հատվածները հաճախ հմայական աղոթքներին հաղորդում են որոշակի բանաստեղծականություն: Օրինակ, չար աչքի խափանման աղոթքներից մեկում ասվում է.

Մեր տան ետի կողմը մի ծով կա,
Ծովի ետի կողմը մի կալ կա,
Կալի միջին մի դեզ կա,
Դեզի միջին յոթ խուրձ կա,
Յոթ խրձան միջին յոթ հասկ կա,
Յոթ հասկի միջին յոթ հատիկ կա.
Հատի՛կ, հատի՛կ, վե՛ր ընկի,
Աչքի՛ հատիկ, վե՛ր ընկի:

Կան նաև վիպական իրադրությամբ այնպիսի հմայական բանաձևեր, որոնցում բացակայում են ցանկության ասույթները, դեռ ավելին՝ ամբողջ իրադրությունը քողարկված է այլաբանական թանձր շղարշով՝ թողնելով անգուշակելի հանելուկային պատկերի տպավորություն: Օրինակ՝ միզկապության բուժմանն ուղղված հետևյալ աղոթքը.

Մի տանն մի կրակ կա՝
Կեսր կա, կեսր չկա.
Վրեն մի կասկարենք կա՝
Կեսր կա, կեսր չկա.
Վրեն մի պղինձ կա՝
Կեսր կա, կեսր չկա.
Վրեն մի խուփ կա՝
Կեսր կա, կեսր չկա.
Վերնուց մի հավք է անցկենում՝
Կեսր կա, կեսր չկա:

Ըստ գեղարվեստական հատկանիշների՝ հմայական աղոթքների վիպական իրադրությունները դրսևորվում են ոճաբանական տարբեր ձևերով. 1. առարկաների և արարքների վիպական նկարագրությամբ, 2. դիմում-կոչականով, 3. երկխոսությամբ, 4. նկարագրությամբ և երկխոսությամբ, 5. նկարագրությամբ և հարցերով, 6. ժխտում-արգելումներով և հաստատում-հերքումներով (էջ 36):

Հետաքրքիր է, որ հմայական աղոթքների ճնշող մեծամասնությունն ընդելուզվել է քրիստոնեական սրբազան բանաձևերով: Այսպես՝ բոլոր հմայական աղոթքները նոր ժամանակներում սկսվել և ավարտվել են տերունական «Հայր մեր» աղոթքով կամ մեկ այլ աղոթքային բանաձևով (էջ 52): Աղոթելուց առաջ աղոթողը խաչակնքում է իրեն կամ աղոթվողին, երբեմն էլ՝ հմայվող անձին կամ կենդանուն խորհրդանշող առարկան, և կամ աշխարհի չորս կողմերը: Աղոթքի սրբազան ազդեցությունը զորացնելու նպատակով աղոթքը պարտադիր կրկնում են երեք, երբեմն հինգ, յոթ կամ ինն անգամ, այսինքն՝ միշտ կենտ սրբազան թվերով: Բանավոր հմայական աղոթքների մի մասն ավարտվում է քրիստոնեական աղոթքների ավարտին բնորոշ «ամեն» բառով կամ «Հանուն Հիսուս Քրիստոսի» բանաձևով, իսկ գրավորները սրանց կարող են հավելել նաև Ս. Երրորդության անվանակոչման օրհնաբանական բանաձևերը:

Այս ամենը ցույց է տալիս, որ տիպաբանորեն սերելով վաղնջական ժամանակներից՝ հմայական աղոթքներից շատերը ենթարկվել են քրիստոնեական վերափոխման ու վերանորոգման, կամ էլ հին նախատիպերով ստեղծվել են ամբողջապես նոր աղոթքներ: Վերջիններիս բացահայտ վկայություններն են հմայական այն աղոթքները, որոնց սյուժետային հիմքում ընկած են քրիստոնեական հանրահայտ ավանդություններ, սրբախոսական ու պարականոն զրույցներ:

Հարությունյանի գրախոսվող աշխատությունը բաղկացած է ընդարձակ ներածությունից (մոտ 50 էջ), որում ամփոփված է տեսական-վերլուծական ուսումնասիրության մեծ մասը, առաջաբանից (3 էջ), որում տրվում են բուն նյութի դասակարգման ու մեկնության սկզբունքները, այնուհետև՝ համառոտագրված աղբյուրների և գրականության ցանկից (6 էջ), բնագրերի թեմատիկ ցանկից՝ ըստ աղոթքների կիրառական խմբերի (17 էջ), ինչպես՝ օրինակ՝ ատամնացավի, գորտնուկի, դիվահարի, սեռական կապքի արձակման, մանկան լոգանքի, դաշտամկների դեմ, ծիածանը ծագելիս, շատախոսին լռեցնելու և այլն, ապա՝ աղոթքների սկզբնատողերի այբբենական ցանկից (թվահամարներով 13 էջ), բնագրերից (130 էջ), որոնք բնդգրկում են 463 աղոթք՝ ավելի քան 760 տարբերակներով, ընդ որում յուրաքանչյուր աղոթքի և նրա տարբերակների տակ պարտադիր նշվում է սկզբնաղբյուրը, իսկ վերջում՝ ծանոթագրություններից և մեկնաբանումներից (237 էջ), որոնցում տրվում են համառոտ տեղեկություններ յուրաքանչյուր աղոթքի բանասացի, բանահավաքի և գրառման հետ կապված հանգամանքների վերաբերյալ, ինչպես և կցվում են համահավաքի հեղինակի զանազան մեկնություններն ու բացատրությունները, այնուհետև՝ բարբառային, օտար և խրթին բառերի բառարանից (25 էջ), աղոթքների տարածման ազգագրական շրջանների ցանկից (3 էջ), անվանացանկից (15 էջ), անգլերեն և ռուսերեն ամփոփումներից (մեկական էջ):

Սարգիս Հարությունյանը գրախոսվող աշխատության նյութերի հավաքումը սկսել է դեռ 1960-ականներին և աշխատանքը որոշ ընդհատումներով շարունակել հաջորդ տասնամյակների ընթացքում: Անցումային շրջանի հետ կապված դժվարություններն ու խոչընդոտները չեն կասեցրել նրա գիտական հետազոտությունների առաջընթացը: Եվ այսօր, շարունակելով ղեկավարել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության տեսության և պատմության բաժինը, Հարությունյանն իր ներկայությամբ իսկ ոգեշնչում ու քաջալերում է գործընկերներին: 2008-ին բոլորելով իր 80-ամյակը՝ հայ բանագիտության և առասպելաբանության նահապետը տակավին շարունակում է իր գիտական պրպտումները՝ միաժամանակ երիտասարդներին հաղորդելով իր գիտական փորձն ու վերլուծական մտորումները:

ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱՆ

«Հայկազյան հայագիտական հանդես»,
Բեյրութ, 2009, էջ 323–336